ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Քաղաքացիական դիմակայունության և կապակցվածության խթանում Արևելյան գործընկերության տարածաշրջանում

Իրականացման ժամանակահատված: 01.03.2024 - 28.02.2026

ԱԼԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 1 500 000

Ընդհանուր բյուջե: € 1 720 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Prague Civil Society Center

Նախագծի նկարագրությունը:

Սույն նախագծի ընդհանուր նպատակն է Արևելյան գործընկերության տարածաշրջանում ձևավորել ավելի փոխկապակցված և առավել դիմակայուն քաղաքացիական հասարակություն, որը պատրաստ և ունակ է ակտիվորեն մասնակցելու սեփական երկրներում ժողովրդավարացման, բարեփոխումների և վերականգնման գործընթացներին՝ նպաստելով ավելի ներառական, դիմակայուն և ժողովրդավարական հասարակությունների կայացմանը:

Հենվելով Կենտրոնի փորձարկված աջակցության մեթոդաբանության վրա, որը ներառում է ճկուն դրամաշնորհների տրամադրում, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից առաջնորդվող կարողությունների զարգացում և համապարփակ տարածաշրջանային մոտեցում, նախագիծը համադրում է երրորդ կողմերին տրամադրվող նշանակալի ֆինանսական աջակցությունը նպատակային, նորարարական և համալիր կարողությունների զարգացման միջամտությունների հետ: Այս մոտեցումը նպատակ ունի աջակցել քաղաքացիական հասարակության կազմակերպություններին դառնալ փոփոխությունների շարժիչ ուժեր, արդյունավետորեն ներկայացնել իրենց շահառուների հետաքրքրությունները, զարգացնել համագործակցային ցանցեր Արևելյան գործընկերություն պլյուս տարածաշրջանում, խորացնել կապը տեղական համայնքների հետ և բարձրացնել իրենց ֆինանսական կայունությունը:

Ակնկալվող արդյունքներ:

Ավելի փոխկապակցված և առավել դիմակայուն քաղաքացիական հասարակություն, որը պատրաստ և ունակ է մասնակցելու ժողովրդավարացման, բարեփոխումների և վերականգնման գործընթացներին՝ արդյունքում նպաստելով Արևելյան գործընկերության տարածաշրջանում ավելի ներառական, դիմակայուն և ժողովրդավարական հասարակությունների ձևավորմանը: